Որպէս ուրիշ գիւղեր՝ գիւղիս բնակիչներն եւս 5—10—20 տարիներէ ի վեր Մշոյ, Պուլանխիս, Մանազկերտոյ, Բաղէշոյ եւ Վանոյ գաղթած են։ Գիւղս քանի փոքրիկ գիւղերու կեդրոն լինելով մի կրպակ եւ երկու բլուտ նաեւ երկու ձիթհանք կայ։

Գիւղիս արեւմտեան կողմն 200 մեթրի չափ հեռին կանգնած է մի արուեստական բլուր, որ ունի գերեզմանի ձեւ. 50 մեթր բարձր եւ գագաթը մի արտավար տարածութեամբ։

Այս բլուրիս արուեստական լինելն յայտնի է նորա համար որ շուրջն 40—50 մեթր լայնութեամբ փորուած տեղը խոնարհուած է նման լայն խրամի։

Ալաշկերտի տափարակ դաշտի մէջ ձուաձեւ հողաբլուրս խիստ կարեւոր տեսարան մի կը կազմէ։

Ցաս տարիէ ի վեր աւանդութիւններն պրպտելով՝ հազիւ կարողացած եմ աննշան քանի աւանդութիւններ գրի առնել։—«Պահակ իշխանի պալատն (այվան) բլուրիս արեւմտեան ծայրն կը գտնուէր, երբ Կոստի Թագաւորը տապանակը բերաւ Պարսկաստանէն, այս պալատն իջոյց, Մէամբտան կամ Մարմտան գիւղն որ առաջ հայ էր, այնտեղ մի հարուստ հայ կին կը լինի, այս կինը եօթ ջորու բեռ ոսկի կը բերէ Կոստի Թագաւորին եւ կը խնդրէ տապանակէն (խաչափայտ) մաս մի, Կոստին դանակ մի կը դնէ տապանակին մօտ, ինքն իրեն կը կտրուի։ Այս կինը երեք օր Թագաւորի ձիանքներուն դարին հոգացեր է։ Ձիաներու մէջ 300 բէաւաք ձի կար» ըսին։

—Խայտ ձին հազուագիւտ լինելուն՝ հասկացնել կուզեն թէ խայտն որ 300 էր, ապա ամբողջն անհաշիւ կլինէր։